

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

I – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված

վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

A – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

n – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

N – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը. *K_n* – վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի գումարը. *D_n* – վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

Փաստացի տարեկան տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

Դիցուք հաճախորդին տրամադրվում է 25.000 000 ՀՀ դրամ գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, 240 ամիս մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

Հաճախորդի ծախսերն են՝

Հայտի քննարկման վճար՝ 1.000 ՀՀ դրամ
 գրավի գնահատման վճար՝ 15.000 ՀՀ դրամ,
 միասնական տեղեկանքի վճար՝ 10.000 ՀՀ դրամ,
 գրավադրման վճար՝ 94.000 ՀՀ դրամ:

Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 100.000 ՀՀ դրամ

Ապահովագրություն՝ դժբախտ պատահարներից և գույքի վարկի մնացորդից՝ 75.000 ՀՀ դրամ
 Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 10,6% :